

ՀՈՂԱՅԻՆ ԾԱԾԿՈՒՅԹ

Հողային ծածկույթի աղտոտման աղբյուրներ կարող են հանդիպործարանները,

- արդյունաբերական և կենցաղային թափոնները,
- գյուղատնտեսությունը,
- տրանսպորտը և այլն:

Մարդու գործունեության արդյունքում միջավայր թափանցած ծանր մետաղների մեծ մասը կուտակվում է հողում: Այնուհետև դրանց մի մասը անցնում է ջրային միջավայր, մի մասը կլանվում է բույսերի կողմից և հայտնվում սննդային շղթայում: Հողի արդյունաբերական աղտոտման հիմնական աղբյուրներն են մետաղաձուլական գործարանները, մետաղական հանքարդյունաբերությունը և արդյունաբերական այլ ձեռնարկությունների թափոնները: Նման աղտոտման աղբյուրները կարող են առաջացնել հողի աղտոտվածություն ծանր մետաղներով (պղինձ, ցինկ, արսեն, կապար, մոլիբդեն, մանգան, նիկել, կադմիում, քրոմ և այլն) և ցիանական միացություններով:

Հողերի որակի գնահատումն իրականացվում է ՀՀ առողջապահության նախարարի 2010 թվականի հունվարի 25-ի N 01-Ն հրամանի համաձայն:



2023 թվականի 3-րդ եռամսյակում հողային ծածկույթի՝ ծանր մետաղներով աղտոտվածության ուսումնասիրման համար դիտարկումներն իրականացվել են Գեղարքունիքի մարզի Ջիլի հանքային դաշտում (նախկին Ջիլի հանքավայր): Ուսումնասիրվել են ընդերքօգտագործման թափոնների լքված լցակույտերի 3 տեղամաս՝ Գլավնայա Ժիլա, Եֆիմով և Չաթին-Դարա: Հանքային դաշտի մոտակա բնակավայրն է Ջիլ գյուղը:

Հանքավայրը հայտնի է եղել 1899 թվականից, երկրաբանահետախուզական աշխատանքներն առաջին անգամ իրականացվել են 1924-1925թթ., հանքաքարի արդյունահանումը՝ սկսած 1937 թվականից: Հանքավայրի պաշարները հաստատվել են 1938 թվականին, իսկ 1947-1950թթ. հաստատված պաշարների գերակշիռ մասն արդյունահանվել է: 1959թ. ՀՍՍՀ երկրաբանական վարչության ՊՏՀ որոշմամբ հանքավայրը դիտարկվել է որպես արդյունաբերական նշանակությունը կորցրած: Տարածքում կուտակված ընդերքօգտագործման թափոնները դիտարկվում են որպես տիրազուրկ/լքված՝:


Ջիլի հանքային դաշտի երեք տեղամասերում ուսումնասիրված հողերում քրոմի պարունակությունը գերազանցում է համապատասխան ՍԹԿ-ն՝ 20.3-440.3 անգամ, նիկելի պարունակությունը՝ 86.8-833.5 անգամ, պղնձի պարունակությունը՝ 2.3-17.3 անգամ, ցինկի պարունակությունը՝ 1.1-6.9 անգամ և արսենի պարունակությունը՝ 2.5-67.0 անգամ: Վանադիումի և կապարի պարունակությունները չեն գերազանցել համապատասխան ՍԹԿ-ները: Տեղամասերի հողերի աղտոտվածության բաշխվածության քարտեզները ներկայացված են ստորև բերված նկարներում:

* Աղբյուր՝ ՇՄՆ «Մետաղական օգտակար հանածոների արդյունահանման արդյունքում գոյացած ընդերքօգտագործման թափոնների լքված/տիրազուրկ արտադրական լցակույտերի և փակված օբյեկտների վերաբերյալ տեղեկատվական բազա» (http://env.am/storage/files/hashvetvutyun-geraka-kayq_1.pdf)


Գեղարքունիքի մարզում Ջիլի հանքային դաշտում ընդերքաօգտագործման թափոնների լքված լցակույտերում նիկելի (Ni) պարունակությունը





ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐ

-  Նմուշառման տեղամասեր
-  Նմուշառման կետեր


Կոնցենտրացիա
մգ/կգ





Գեղարքունիքի մարզում Ջիլի հանրային դաշտում ընդերքաօդազորման թափոնների լքված լցակույտերում քրոմի (Cr) պարունակությունը





ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐ

-  Նմուշառման տեղամասեր
-  Նմուշառման կետեր



Կոնցենտրացիա
մգ/կգ



Գեղարքունիքի մարզում Ջիլի հանրային դաշտում ընդերքաօգտագործման թափոնների լքված լցակույտերում ջինկի (Zn) պարունակությունը



ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐ

-  Նմուշառման տեղամասեր
-  Նմուշառման կետեր

Կոնցենտրացիա
մգ/կգ

